ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՆԱ
(ԱԻ)
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐՈՒՄ

Հայկական լեռնաշխարհին վերաբերող ուրարտական սեպագիր տեղանունների հիմնահարցը քննարկելիս, ի տարբերություն նախկին թյուր կարծիքի, պետք է նկատի ունենալ, որ գիտությունը գործ ունի ոչ թե ուրարտական, այլ հիմնականում Հին Հայաստանի տեղանունների հետ, որոնք տեղ են գտել ուրարտական սեպագրերում հինարևելյան այդ պետության նվաճողական արշավանքների ժամանակ:

Հարկ է նշել, որ գիտության մեջ տեղ գտած նախկին պատկերացումները, թե հայ-ուրարտական Տայք-Diauḫi, Տուարածատաի-Ṭuaraṣiniei ḫubi, Ծոփք-Ṣupani, Աբեղեանք-Abiliani, Ծղուկ-Ṣuluqu, Հավնունիք-Abuni և այլ նույնական տեղանունների մեջ առաջնությունը պատկանում է ոչ թե սեպագիր անվանումներին, այլ հին հայկականին: Դրանք, ըստ էության, հին Հայաստանի աշխարհագրական միավորներն են, որոնց հինարևելյան զավթիչները տեղյակ են դարձել տեղաբնիկներից և, դրանք հարմարեցնելով վանկագիր սեպագրի կանոններին, մատուցել արձանագրություններում: Ինչ վերաբերում է ուրարտական տեղանուններին, ապա փաստական նյութը վկայում է, որ դրանք քանակապես սահմանափակ են և բացառապես կազմված են ուրարտական ղեցանուններից և արքաների անուններից:

Հայ-ուրարտական տեղանունների համադրություններին, նրանց զբաղեցրած տարածքների տեղորոշմանն իր աշխատություններում անդրադարձել է նաև Գր. Ղափանցյանը: Նրանցից մի քանիսին, որոնք համադրվել են մասնագիտական գրականության նորովի նյութերով, ներկայացնում ենք ստորև:

Աբեղեանք - $^{m/KUR}$Abiliani

Այս երկիրը ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակվում է Արգիշտի I-ի (մ.թ.ա 786-764թ.թ.) Խորխորյան տարեգրության մեջ[1]: Աբեղեանք-Abiliani-ի տեղորոշման մասին մանրամասն տվյալներ է հաղորդում նրա հաջորդ՝ Սարդուրի II-ի (մ.թ.ա 764-735) տարեգրությունը, որի համաձայն ուրարտական արքան Eriaḫi երկրից վերադառնալու ճանապարհին մուտք է գործել Abiliani երկիր[2]: Էրիախի երկրի նվաճման

մասին է հաղորդում Արգիշտի I-ի Գյումրի քաղաքից ոչ հեռու ընկած Մարմաշեն գյուղի արձանագրությունը՝ Աիուրյան գետի ձախ ափին[2]: Այս փաստերը վկայում են, որ Էրիախի երկիրը գտնվել է Գյումրիի շրջանում և դա պատմական Շիրակ աշխարհն է: Այս պարագայում Արիլիսանին գտնվել է նրանից հարավ-արևմուտք, քանի որ ուրարտացիները այնտեղ են հայտնվել հայրենիք վերադառնալու ճանապարհին:

Այս երկրի (ցեղի) տեղորոշման համար նաև արժեքավոր են Սարդուրյան տարեգրության տվյալները, որի համաձայն Արիլիանին հիշատակվում է Հաւնուիք-Abuni-ից ոչ հեռու՝ Արաքսի աջափնյա հատվածում, Աբեղեանք-Abiliani-ից հարավ-արևմուտք[4]:

Ելնելով այդ ամենից, Գր. Ղափանցյանը հետևելով Կ. Բասմաջյանին և Ն. Մառին, իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Աբեղեանք գավառի անունից է սերում սեպագիր դարաշրջանի Abiliani երկրանունը: Հետևաբար, այն պետք է տեղորոշել նույն տարածքում՝ Արաքսի վերին հոսանքի ձախափնյա հատվածում[5]:

Հաւնունիք-^{KUR}Abuni

Նկատի ունենալով այս տեղանվան bu վանկի փոխարեն pu ընթերցումը, ինչպես նաև Տուրուբերանի Ապահունիք գավառի անունը՝ Ն. Մառը ենթադրում է, որ հիշյալ երկիրը հենց Ապահունիքն է՝ Վանա լճից հյուսիս, Արածանիի վերին հոսանքում[6]: Միևնույն կարծիքն է հայտնում նաև Գր. Ղափանցյանը, սակայն, միաժամանակ կասկածի տակ է առնում այդ երկրի աշխարհագրական տեղադրման հնարավորությունը[7]:

Փաստական նյութի լրացուցիչ ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ Գր. Ղափանցյանի տարակուսանքները տեղին են: Ն. Հարությունյանը իրավացիորեն հիմնավորում է Հաւնունիք - ^{KUR}Abuni զուգահեռը, երբ սեպագիր աղբյուրների այդ երկրանունը վերընթերցել է ^{KUR}A-bu-ni և այն նույնացրել հին Հայաստանի Հաւնունիք գավառի հետ[8]:

^{KUR}Abuni-Հաւնունիք աշխարհագրական միավորների նույնացման խնդրում Ն. Հարությունյանը առաջին հերթին նկատի է ունեցել ուրարտա-հայկական լեզվական ընդհանրությունները բնութագրող առանձնահատկությունները. ուրարտերենի b և հայերենի ւ(վ) հնչյունափոխությունը (հմմտ. ḫubi-հովիտ), «Հաւնունիք»-ի սկզբի «հ» հագագային թույլ հնչյունը կարող է սղվել (հմմտ. ուրարտ. ^{d}ïaldi և ^{d}Aldi), իսկ այս տեղանվան միջանկյալ «ն» հնչյունի բացակայությունը ուրարտական ^{KUR}Abuni-ում հիմնավորվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ նաև «Հաւնունիք» անվան գոյությամբ[9]:

Ինչ վերաբերում է ուրարտա-հայկական գավառների տարածքային համապատասխանությանը, ապա այդ մասին վկայում են Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի տարեգրությունների հավաստի փաստական նյութերը:

Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրության համաձայն, երբ արշավանքի երթուղին ընթանում էր հյուսիսից՝ (Diauḫi-Տայքից). ապա Էրիախի երկրի նվաճումից հետո ուրարտացիները ուղևորվում են ավելի հարավ՝ Աբունի[10]: Խորխորյան տարեգրության տվյալները վկայում են, որ Աբունի երկիրը գտնվել է Eriaḫi-Շիրակից հարավ-արևմուտք:

Մյուս կողմից, համաձայն Սալմանասարյան տարեգրության՝ ուրարտացիները կրկին արշավելով հյուսիսից (այս անգամ Էթիունի երկրից), Էրիախին նվաճելուց հետո արշավում են Իշտելուա(նի), Կաղիա(նի) երկրները: Այնուհետև, հայտնվում են խնդրո առարկան Abuni-Հաւնունիքում և Abiliani-Աբեղեանքում[11]: Այս արշավանքի տվյալները հստակ վկայում են, որ երթուղին ընթացել է հյուսիսից՝ Eriaḫi-Շիրակից դեպի հարավ-արևմուտք՝ Abuni-Հաւնունիք և Abiliani-Աբեղեանք, այսինքն՝ Արաքս գետի ձախավտնյա և աջափնյա հատվածները:

Ի մի բերելով վերը նշված փաստական նյութը՝ մասնագիտական գրականության մեջ հանգել են այն հետևության, որ պատմական Հայաստանի Շիրակ գավառի մոտակայքում գտնվող Հաւնունիքը եղել է ուրարտական սեպագրի ^{KUR}Abuni-ի նախատիպը:

Տուարածատափ - ^{KUR}Ṭuaraṣiniei ḫubi

^{KUR}Ṭuaraṣiniei-ḫubi-ն ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակվում է միայն Խորխորյան տարեգրության 12-րդ տարվա ռազմական արշավանքի վերնագրային տեքստում: Այստեղ հաղորդվում է Խալդի աստծու անունից Տուարածատափի հովտի երկրից մինչև Գուրկու լեռը նվաճման մասին[12]: Խորխորյան տարեգրության ^{KUR}Ṭuaraṣiniei-ḫubi երկիրը դեռևս 20-րդ դարի սկզբներին Հ. Ասանդալչյանի կողմից իրավամբ նույնացվել է հին Հայաստանի Տուարածատափ գավառի հետ, որը գտնվել է Վանա լճից հյուսիս-արևմուտք, Արածանիի վերին հոսանքում[13]: Ինչ վերաբերում է Տուարածատափին հարևան ^{ŠADÙ}Gurgu-ին, ապա մասնագիտական գրականության մեջ առաջինը Գր. Ղափանցյանն այն նույնացրել է հայկական աղբյուրների Քարքե լեռան հետ, որը գտնվել է Հաշտեանք գավառում, Աշաիշատ քաղաքի մոտակայքում[14], այսինքն՝ մեզ հետաքրքրող ^{KUR}Ṭuaraṣiniei-ḫubi- Տուարածատափ գավառից մի փոքր հարավ-արևմուտք:

Ի դեպ, ուրարտական սեպագիր աղբյուրների ^{KUR}Ṭuaraṣiniei-ḫubi գավառի տեղադրման կապակցությամբ կարևոր է նաև Ի. Մ. Դյակոնովի կարծիքը, որը Խորխորյան տարեգրության այդ տեղանունը համադրում է ասորեստանյան սեպագիր աղբյուրների Tuatiṣui-ի հետ: Ասորեստանյան մ.

թ. ա VIII դ. թագավոր Թիգլաթպալասար III-ի մոտ այն հիշատակվում է Էնզի և Ուրարտու նվաճված քաղաքների շարքում[15]: Enzi-Enzite-ն մասնագիտական գրականության մեջ նույնացվում է անտիկ աղբյուրների Էնզիտենեի և հին հայկական աղբյուրների՝ Անձիտ գավառի հետ՝ Խարբերդի հարթավայրում, Արևմտյան Տիգրիսի ակունքներից արևմուտք և Արծանիս-Արածանիից հարավ[16]:

^{KUR}Ṭuaraṣiniei-ḫubi-ի տեղորոշմանը նպաստում են նաև Խուրխորյան տարեգրության և Մենուս արքայի Արծվաբերդի արձանագրության[17] տվյալները՝ միևնույն տարածքում Դաինալի գետից անցկացված ոռոգիչ ջրանցքների մասին: Խորխորյան տարեգրության 12-րդ տարվա տվյալների համաձայն, Դաինալի գետից ջրանցքը անցկացվել է Տուարածատափ գավառի տարածքում: Իսկ Արծվաբերդի արձանագրության (Արճեշից հյուսիս-արևելք) համաձայն՝ ուրարտացիները նույնպիսի շինարարական գործունեություն են ծավալել Վանա լճից հյուսիս: Հետևաբար, Դաինալիի հիշատակությունը Արածանիից հյուսիս (Խորխորյան տարեգրություն) և նրանից հարավ (Արծվաբերդի արձանագրություն) հանգեցնում են այն համոզման, որ սեպագիր դարաշրջանի Դաինալիի տակ ենթադրվում է պատմական Հայաստանի Արածանիի վերին հոսանքի հատվածը՝ ասորեստանյան սեպագիր աղբյուրների Arṣania-յի նախատիպը[18]:

Հայ-ուրարտական տեղանունների համադրությունների մեջ Գր. Ղափանցյանի ներդրած նորույթները վերը նշված փաստերով չեն սահմանափակվում և դրանք այսօր էլ շարունակում են մնալ գիտության մեջ հատուկ ուսումնասիրության առարկա: Բավականին ժամանակ է անցել, երբ Ուրարտուի տեղանունների ուսումնասիրության առումով ուրարտագիտությունը մեծ առաջընթաց է ապրել, սակայն Գր. Ղաֆանցյանի դիտարկումները առայսօր էլ իրավամբ պահպանել են իրենց ուրույն տեղը այդ առաջընթացում:

SONA GRIGORYAN
(IOS)

ACADEMICIAN GRIGOR KAPANTSYAN AND THE TOPONYMS OF OLD ARMENIA IN THE URARTIAN CUNEIFORM WRITINGS

When one considers the problem of the Urartian cuneiform toponyms, which concern the territory of Armenia, one must take into consideration that, in difference to the former wrong view, the research has to do not with Urartian toponyms but chiefly with toponyms of old Armenia which found their place in Urartian cuneiform writings when that old eastern nation carried out its campaigns to conquer other territories. Also G. Kapantsyan considered in his works the comparison of the Armenian-Urartian toponyms and the determination of the territories they occupied. With respect to the toponym Abegheank - $^{m/KUR}$Abiliani, following K. Basmadjian and N. Marr, came rightly to the conclusion that

the name Abiliani which belongs to the cuneiform era takes its origin from the province Ahegheank of the state Ayrarat of historical Armenia. He says that the Abegheank lies at the left bank of the upper stream of Araks. He identifies the toponym Havnunik - ^{KUR}Abuni with the province Apahunik which lies to the north of the lake of Van. in the upper streams of Aratsani. N. Harutyunian rigthly substantiates the parallel Havnunik - ^{KUR}Abuni. when he defined that toponym of cuneiform sources as ^{KUR}Abuni and identified it with the province Havnunik of old Armenia which is mentioned in the "History of Armenia" by Movses Xorenatsi. Kapantsyan rightly identified the Ṭuaraṣinici-ḫubi. which is mentioned in the Xorxorean annals. in the title text of the 12th year war capaign. with the province Tuaratzatap of old Armenia, which lied to the north-west of the lake Van. in the upper stream of Aratsani. What concerns the mountain ^{ŠADU}Gurqu neighboring with Tuaratzatap, Kapantsyan is the first scholar in Urartology who identified it with the mountain Karke of Armenian sources which was located in the province Hashteank. in the neighborhood of the town of Ashtishat. to the south-esat of the province ^{KUR}Ṭuaraṣiniei-ḫubi-Tuaratzatap.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001, 173, I, տող 17 (այսուհետև՝ КУКН).
2. КУКН. 241С. տողեր 25-35:
3. КУКН, 179. տող 3:
4. КУКН, 241F, տող 14-15:
5. Բասմաջյան Կ.Հ., Հայ նախարարութիւնները բեւեռաձեւ արձանագրութեանց մեջ, «Բանասեր», Փարիզ. 1902, №7-9, էջ 239; Марр Н., Орбели И. А., Археологическая экспедиция 1916г. в Ван, Пб., 1922, с. 66 (այսուհետև՝ АЭВ); Капанцян Г.А., Историко-лингвистическое значение топономики древней Армении, Ер., 1940, с. 4-6, (այսուհետև՝ ИЛТДА), նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, Եր., 1961, էջ 47, 133 (այսուհետև՝ ՀԼՊ); Chetto- Armeniaca, Ер., 1931, էջ 104; Ուրարտուի Պատմությունը, Եր., 1940, էջ 158, 164, 171, 182 (այսուհետև՝ ՈՒՊ):
6. Марр Н., Орбели И. А., АЭВ, էջ 58-59:
7. Капанцян Г.А., ИЛТДА, էջ 46; նույնի՝ ՀԼՊ, էջ 57; ՈՒՊ, էջ 128, 158, 170, 182:
8. Арутюнян Н.В., Биайнили-Урарту, Ер., 1970, էջ 399-402: նույնի՝ Топонимика Урарту, Ер., 1985, էջ 9-10 (այսուհետև՝ ТУ); նույնի՝ Биайнили-Урарту (издание второе), Санкт-Петербург, 2006, էջ 309-311:
9. Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ III և ծնթ. 11:
10. КУКН,127, I, տողեր 6-12: 128 B1. տողեր 34-38:
11. КУКН, 241F, տողեր 4-14:
12. КУКН, 173, V, տողեր 11-13:
13. Sandalgian J., Les inscriptions cuniforms uratiques, Venise, 1900, էջ 428; Капанцян Г.А., Хайаса-колыбель армян, Ер., 1947, էջ 195, ծնթ. 2:
14. Капанцян Г. А., ИЛТДА, էջ 44, նույնի՝ ՈՒՊ, էջ 163, 170: Ինչպես նաև՝ G. Djahukian, Armenian words and proper names in Urartian inscriptions. Proceedings of the Fourth International Conference on Armenian Linguistics, Cleveland, Ohio, 1991, էջ 54-55:
15. Дьяконов И.М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, (ВДИ, 1951, № 2-4), 45 և ծնթ. 2 (այսուհետև՝ АВИИУ):
16. Ղափանցյան Գր., ՀԼՊ, էջ 66; նույնի՝ ՈՒՊ, էջ 19, 134, 223:
17. КУКН, 75, տող 26:
18. Арутюнян Н. В., Биайнили-Урарту, Санкт-Петербург, 2006. էջ 294-295: